№ 144 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 4 **1900** ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 4 № 144

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւան 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է վերականգնվի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մատենագրութիւն. Նամակ Բագուից. Նամակ Շուշուց. Նամակ Ջիվանշիրի գաւառից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինական գործերը. Բժշկական համաժողովը Պարիզում. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աջողված փորձ։

## ՊԷՏՔ Է ՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ

Անդրկովկասի սահմանակից երկիրներից, Պարսկաստանից և Թիւրքիայից ստացվող տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այս տարի ազգաբնակութիւնը փոքր ի շատէ ապահով պէտք է լինի կենսական անհրաժեշտ պիտոյքների կողմից։ Փոքր ի շատէ ենք ասում այն պատճառով, որ թէև տարին բերրի է և ցանքսերը ու խոտահարքերը լաւ հունձ տուին, սակայն ազգաբնակութեան մի խոշոր մասը անկարող էր հանդիսացել հողը մշակելու և ցանքսեր անելու։ Սարսափելի կարօտութիւնը, որ աշնանից սկսած սրբել էր տներից և շտեմարաններից բոլոր պաշարները, արգելք եղաւ կանոնաւոր երկրագործութեան։ Շատերը ծախեցին իրանց կենդանիներին հաւսկ ձեռք բերելու համար և չը կարողացան ժամանակին հողը հերկել և սերմացու գնել ցանելու համար։

Այս տարվայ առատ բերքը էժանացրել է մթերքների գինը, որ բարձրացել էր գարնան ամիսներում չը տեսնված և չը լսված կերպով։ Այդ երկարատև զրկանքը և անսովոր կերակրվելու հանգամանքը առաջացրին բազմաթիւ ստամոքսային և այլ տկարութիւններ, որոնք բաղդի աջող բերումով չը փոխարկվեցին աւելի վտանգաւոր վարակիչ հիւանդութիւնների։

Այժմ հանդէս է գալիս քայքայված տնտեսութիւնների վերականգնման հարցը։ Օգտվելով մթերքների էժանութիւնից, անհրաժեշտ է հողագործի ձեռքը տալ սերմացու իր խոպանացած հողերը և խոզանները նորից մշակելու և ընտանիքի համար ապրուստի միջոց հայթայթելու։ Մի քանի տարի սրանից առաջ ամէրիկական և անգլիական նպաստամատոյց հիմնարկութիւնները բաժանում էին գիւղացիներին երկրագործական գործիքներ, բանւոր գրաստներ և սերմացու։ Այդ գործը արդարև մխիթարական հետևանքներ առաջացրեց և նպաստեց երկրագործների տնտեսութեան վերակազդուրման. սակայն կարճ ժամանակից յետոյ նա դադարեց, մինչդեռ կարօտութիւնը շատ տեղ շարունակում է իր նախկին պահանջներն անել, իսկ վերջին անբերրիութեան շնորհիւ նա երևան եկաւ և այնպիսի տեղերում, ուր նա չը կար առաջ։

Հողագործին օգնելու ամենալաւ միջոցն է ապահովել նրան հողով, երկրագործական գործիքներով, գրաստներով և սերմացուով։ Նա սիրում է իր արհեստը և չէ վախենում ֆիզիկական աշխատանքից. նա մուրացկանութեան թշնամի է և պատրաստ է երկրագործական աշխատանքի ծանրութիւնները կրել, միայն թէ ստիպված չը լինի ձեռք մեկնել ուրիշին հաց խնդրելու։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՄՈՒԼ

«Մշակի» մէջ տպված յօդուածներից մեր ընթերցողները գիտեն, որ ներկայումս միայն Բաթումի հայ քահանաներն են կանոնաւոր ռոճիկ ստանում ժողովրդից եւ ազատված են ձեռք մեկնելու, «Խնթի» տէր-Մարուքի ապարիկները հաւաքելու տխուր անհրաժեշտութիւնից։ Այդ համակրելի նորմուծութիւնը, որքան կարող եղանք դատել մեր խմբագրութեան հասած տեղեկութիւններից, շատ տեղ շատ լաւ տպաւորութիւն է թողել եւ ընդունվել է իբրեւ ամենախելացի եւ արդար միջոց, որով կարելի է վերացնել քահանայի եւ ծուխի մէջ եղած անսահման վէճերն ու անբաւականութիւնները։ Այդպէս չէր տպաւորութիւնը Կ. Պօլսում, ուր նոյնպէս հասել է այդ նորութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով։ Ամենից առաջ քահանաներին ռոճիկ տալու հարցը դուր չէ եկել Զմիւռնիայի առաջնորդ Մելքիսեդէկ արքեպիսկոպոսին. բայց նրա բացատրութիւնը, որ բերում են Կ. Պօլսի լրագիրները, աւելի այն է ապացուցանում, թէ այդ հոգեւորականը մի վերին աստիճանի անջողակ Բիսմարկի դերի մէջ է։ «Սուրհանդակ» լրագրի մէջ տպված մի յօդուածից մենք իմանում ենք, որ այդ առիթով նոյն իսկ բանակռիւ է սկսվել թիւրքահայ լրագիրների մէջ։ Թէ ինչ են ասել միւսները—մենք չը գիտենք. բայց ինքը, «Սուրհանդակը» հին կարգերի կողմնակից է եւ ասում է.

Ինչ կեղծ սոսկում, պնակներէ ու գանձանակներէ։ Կարծես միայն հայ եկեղեցւոյ մէջ դրուած ըլլային։ Մայրաքաղաքիս բոլոր քրիստոնեայ եկեղեցիներուն մէջ պնակներ եւ գանձանակներ կը տեսնուին, խնդիր չէ շատը կամ քիչը։ Իսկ յոյն քահանաները յայտնի է, թէ մինչեւ իսկ եկեղեցիներէն դուրս, շուկաներուն մէջ շրջաբերութեան կելլեն։ Ատիկա չէ՞ անհեթեթը, շուկայականը, սարաֆականը, մամոնայականը։ Ինչո՞ւ մեր աւանդական սովորութիւնները մեր աչքին դէշ կերեւան։ Օտարները, անգլիականը եւ այլն կը յիշուին, ինչու մեզի աւելի մօտը եղող դրացի յոյն օրինակ չի բերուիր, որ այն ալ մեզի պէս Արեւելեան հին եկեղեցին կը ներկայացնէ։

Ուրիշ խօսքերով՝ նոյն իսկ ամենահասարակ ու պարզ հարցերի մէջ, երբ ամեն ինչ—ժամանակը, ընդհանուրի պահանջները—ցոյց է տալիս վճռի ճանապարհը, մենք չը պիտի մեր սեփական ուղեղը շարժենք, այլ պարտաւոր ենք նայել, թէ ուրիշները ինչ են անում, այն էլ այնպիսի ուրիշներ, ինչպէս են յոյն հոգեւորականները։ Անմիտ աւանդապահութիւնը ջատագովելու համար առաջ քաշված այս ծակ տրամաբանութիւնը, ի հարկէ, շատերին չի համոզի։ Այդ պատճառով լրագիրը փաստաբանում է քահանայական մուրացկանութիւնը։

Մենք այսպէս կը հաւատանք, թէ նուէր տալուն մէջ ուրիշ հոգի մը եւ ազնուութիւն մը կայ, որ զգացման աստիճանը կը ցուցնէ, եւ ոչ կարողութեան։ Քահանայի մը Զատկի եւ Ծննդեան տնօրհնէքի առթիւ ստացած նուէրները, եթէ համեմատութեան դնենք, ամեն քահանայ պիտի խոստովանի թէ աղքատը իր կարողութենէն շատ վեր գումարներ կուտայ բաղդատմամբ հարուստներուն։ Այրի կինը իր հիւանդ զաւակին վրայ բժշկութեան աւետարան կարդացող քահանային սրտաբուխ օրհնութիւններէն թելադրեալ կը նուիրէ գումար մը, զոր մենք չը պիտի համարձակէինք իբր տուրք գանձել այդ կնոջմէն։ Այս պատճառաւ շատ անգամ խնդիր եղած է հարսնիքի, եւ ննջեցելոց թաղման արարողութեան համար քահանային տրուելիք գումարը չը սակարկել։ Մեր քահանաները, ինչպէս յայտնի է, ամենափոքրիկ նուէր մը առնելու համար, տաճարին մէջ նոյն իսկ եթէ 10 հոգի ալ գտնուի, չեն թերանար գանձանակ պտտցնելու, մինչ հիւանդի մը Ս. Հաղորդութիւն տանելը, որուն փոխարէն նուէր տալը մեղք համարուած է, իրարու վրայ կը թողուն, եւ դժկամակութեամբ կը կատարեն այս պարտքը մեծ մասամբ։ Արդ, երբ քահանայի մը ամսաթոշակը որոշ է, իր պարտքը կատարէ թէ ոչ, պիտի գանձէ. ինչպէս պիտի կարողանանք քահանաներուն քով գտնել այն եռանդը, որ կը տեսնուի ամենափոքր նուէր մը գանձելու առեն։ Այն առեն քահանաները իրարու վրայ պիտի նետեն կատարել այն պարտաւորութիւնները, զորս այսօր գոնէ նուէր մը առնելու յուսով կը կատարեն։

Եթէ մի ժամանակ է եղել, երբ քահանան իր կատարած ծէսերի համար ստացել է նուէր, այժմ այդ անունը պէտք է դուրս գցել, որովհետեւ այժմ քահանայի ստացածը նուէր չէ, այլ երկար ու բարակ սակարկութիւններով, վէճերով, յաճախ եւ տուր ու դմբոցով ստացվող հարկ։ Այսօր ցանկալի է համարվում կանոնաւորել այդ հարկը։ Ամենից զարմանալին այն է, որ Կ. Պօլսի հրապարակախօսները կարծում են թէ ռոճիկ ստացող քահանան չէ կարող բարեխիղճ լինել, այլ կը խուսափէ իր պարտաւորութիւններից։ Կարծես թէ այժմ, երբ սրբազան աւանդութիւնն է տիրում, անբարեխղճութիւն չէ կատարվում. ընդհակառակն, այժմ հայ քահանան իր աչքը դրած է հարուստի դրանը եւ այդ կախարդական չէմքով անցնելու ու մի քիչ «տօղիկ» աջահամբոյր ստանալու համար պատրաստ է տանեակ անթաղ մնացած մեռելների, անկնունք մնացած երեխաների վրայով անցնել, մոռանալով ոչ միայն պարտականութիւն, այլ նոյն իսկ պատիւ ու ամօթ։ «Սուրհանդակը» հարց է դնում եւ այն մասին թէ ինչ պէտք է լինի, եթէ եկեղեցին անկարող լինի քահանային ռոճիկ վճարել։ Այդ դէպքում քահանաները

արդեօք սնանկութեան դատ չը պիտի՞ բանային, ու եկեղեցին սնանկ հրատարակելով, եկեղեցւոյն կալուածները ու արծաթեղէնները պիտի չը ծախէի՞ն, երբ ժողովուրդը չուզէր վճարել իր վրայ դրուած հարկը։ Իսկ եթէ եկեղեցւոյ վարչութիւնը կամ թաղականութիւնը, օրինական միջոցներով այդ հարկը գանձել նկրտէր, ինչպէս ապագային կը յուսացուի որ ընեն ռուսահայերը, այն առեն ժողովուրդը «ես հայ եկեղեցւոյ չեմ պատկանիր» ըսելով, պիտի չը հեռանա՞ր իր մայրենի եկեղեցիէն։

Այստեղ հօ հարցի էութիւնը բոլորովին մարված չէ։ Ռոճիկ տալիս է եկեղեցու ժողովուրդը...

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Պարտք եմ համարում «Մշակի» միջոցով մեր այգետէրերի եւ պարտիզպանների ուշադրութիւնը հրաւիրել այն վերին աստիճանի աջող փորձի վրա, որ այս գարնանը արվեց Ա. Ծատուրեանի՝ Ղուբայի գաւառի «Աթլուխան» կալուածի ընդարձակ պարտէզում՝ պտղատու ծառերի, մանաւանդ խնձորենու, ամենավտանգաւոր թշնամու՝ թրթուրը (яблоновая моль, hyponomeuta malinella) ոչնչացնելու համար։

Վերոյիշեալ պարտէզում խնձորի եւ տանձի ամենաընտիր տեսակի ծառեր տնկված են մօտ 15 դեսեատին տարածութեան վրա. երկար տարիների ընթացքում այդ պարտէզը գրեթէ ոչ մի արդիւնք չէր տալիս շնորհիւ այն հանգամանքի, որ դեռ եւս ծաղկատւութիւնը չը վերջացած՝ թրթուրը խիտ ոստայնով պատում էր ողջ ծառը եւ մի երկու շաբաթվայ մէջ լափում էր ամբողջ սաղարթը, որով ծառը մնում էր մերկ, իսկ պտուղները թեթեւ քամուց իսկ թափվում էին եւ յաջորդ տարվան թրթուրի զարգացման համար հարուստ հող էին պատրաստում։

Նոյնն էր եւ այս տարի, երբ մայիսի 15-ին, բարեբաղդաբար, կալուածը այցելեց ֆիլօքսերայի յանձնաժողովի գործադիր անդամ չըրջող գիւղատնտես պ. Ս. Բաշինջաղեանը. նա խորհուրդ տուեց թրթուրով վարակված ծառերը սրսկել պարիզեան կանաչ (парижская зелень) անունով յայտնի փոշուց պատրաստած հեղուկով։ Մենք սկսեցինք. դա առաջին փորձն էր, որ անում էր պ. Բաշինջաղեանը Ղուբայի գաւառում թրթուրի դէմ։ Մենք վերցրեցինք երկու զուգահեռական շարքեր—երկուսն էլ խիստ բռնված թրթուրով եւ փոշին ջրի եւ կրի որոշ խառնուրդով լուծած սիֆօնիում ապպարատի միջոցով սկսեցինք սրսկել միայն ձախ շարքը, թողնելով աջակողմեանը անսրատ, որպէս զի հետեւանքը աւելի ակնյայտնի լինի։ Սրսկված ծառերի թիւը 40-ն էր. նոյնքան եւ չը սրսկված։

Ճիշդն ասած, մենք ինքներս խիստ կասկածում էինք այս փորձի աջողութեան մասին, որովհետեւ թրթուրը գտնվում էր իր զարգացման ամենընդարձակ շրջանում։ Տերեւների մեծ մասը կերված էր, մնացածի վրա ճիճուները շարունակում էին իրանց աւերիչ գործը. ծառերը պատած էին գորշ դեղին ոստայնով, որոնց մէջ բուն էին դրել հազարաւոր ճիճուներ։

Անցաւ մի քանի օր եւ ես նկատեցի հետեւեալը—այն բոլոր ոստայններում, ուր ընկել էր հեղուկը, ճիճուները ուշաթափված եւ շըշմած էին, տեղ-տեղ նոյն իսկ սատկած, իսկ ճիճուներից նրանք, որոնք տերեւների վրա էին, անշարժացել էին տերեւների վրա, որով աւերմունքը մնացել էր անկատար։ Անցաւ մի ամիս. յունիսի 22-ին եկան կալուած նոյն պ. Բաշինջաղեանը եւ յայտնի պարտիզպան պ. Ա. Կլաուսէնը. բոլորս էլ զարմացած էինք այն տարբերութեամբ, որ նկատելի էր թրթուրի բժշկված եւ չը բժշկված ծառերի վրա։

Բժշկված ծառերի վրա չը կար այլ եւս ոչ մի թրթուր. առանց բացառութեան ամենքը սատկել էին. ծառը տուել էր նոր, թարմ, առողջ տերեւներ՝ կերուածների տեղ. պտուղը ամբողջ էր, անվնաս եւ առողջ, այն ինչ հանդիպակաց չը բժշկված շարքի խնձորենիները զուրկ էին տերեւից, ցաւալի տեսք ունէին, իսկ պտուղները բոլորը թափված էին գետին։ Տարբերութիւնը այնքան մեծ էր եւ աչքի ընկնող, որ պ. Կլաուսէնը իր հետ ունեցած լուսանկարչական գործիքով իսկոյն լուսանկարեց այդ երկու շարքի ծառերը։ Ինչ կասկած, որ մեր ուրախութիւնը մեծ էր, որովհետեւ այդ փորձը ամենաշօշափելի կերպով ցոյց էր տալիս պարիզեան կանաչի ունեցած ազդեցութիւնը թրթուրով բռնված ծառերի վրա։

Աւելորդ չէ մի քանի տեղեկութիւն այդ փրկարար փոշու, խառնուրդի եւ բժշկութեան եղանակի մասին։

Պարիզեան կանաչը մկնդեղի (МЫШЯКЪ) եւ պղնձի աղի քիմիական մի խառնուրդ է, ուր առաջինը կազմում է փոշու մէջ մօտ 58%. ծախվում է կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան պահեստում, պուդը 17 րուբլով, парижская зелень անունով։ Սրսկելու համար վերցնում են 20 վեդրօ ջուր, ածում մի բաց տակառի մէջ, դրա մէջ խառնում են կէս ֆունտ այդ փոշուց եւ շարունակ խառնում են ջուրը մինչեւ որ փոշին լուծվի. ապա մի ուրիշ ամանում ածում $1\frac{1}{2}$ ֆունտ նոր այրած եւ հանգցրած կիր, դա եւս $\frac{1}{2}$ վեդրօ ջրի մէջ լաւ լուծում եւ կրի այդ լուծվածը լցնում պարիզեան կանաչով լուծած 20 վեդրանոց տակառի մէջ եւ նորից խառնում. ապա այդ խառնուրդ հեղուկը լցնում են Վերմորելի ապպարատի մէջ եւ բարձր գցող սրսկիչով սրսկում թրթուրով վարակված ծառը. Ջուրը թափվում է տերեւների վրա. վարակում եւ թունաւորում է տերեւները, որոնց վրա նստած են թրթուրները, իսկ այս վերջինները, ուտելով սրսկված տերեւը, իրանք էլ թունաւորվում են եւ սատկում, որով փրկվում է թէ ծառը, թէ տերեւը եւ թէ պտուղները։ Ծառերը պէտք է սրսկել երկու անգամ. առաջինը, երբ գարնան սկզբին ծառը նոր տերեւաւորվել է եւ երկրորդ՝ մայիսի վերջին, երբ թրթուրը սկսում է լափել տերեւները։ Եթէ սրսկումից անմիջապէս յետոյ անձրեւ գայ եւ լուանայ սրսկած ծառը, պէտք է անձրեւից յետոյ սրսկումը նորից կրկնել։ Սրսկված պտուղները թունաւոր չեն, ուտելի եւ բոլորովին անվնաս։

Վերջացնելով նամակս, թոյլ եմ տալիս ինձ յուսալ, որ մեր պարտիզպանները չեն զլանայ օգտվել այս փորձից եւ բժշկութեան եղանակից, որով փրկած կը լինեն իրանց պարտէզը թրթուրի պէս վտանգաւոր թշնամու աւերմունքից։

Գիւղատնտես Ա. Աթանասեան

